ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
18 հոկտեմբերի 2022 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9/2
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 9-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 58 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Տիգրան Ավինյանը, Սուրեն Գրիգորյանը, Գևորգ Սիմոնյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սեյրան Մեջլումյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Արամ Դանիելյանը, Սուսաննա Գրիգորյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը, լրատվության վարչության պետի պաշտոնակատար Լևոն Սարդարյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետի պաշտոնակատար Վահան Խաչատրյանը, տրանսպորտի վարչության պետի պաշտոնակատար Հայկ Սարգսյանը, շինարարության և բարեկարգման վարչության պետի պաշտոնակատար Խորեն Գրիգորյանը, «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Սարգիս Մանուկյանը:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2022 թվականի նոյեմբերի 22-ին, ժամը 11.00-ին:

ՈՐՈՇՎԵՑ – Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2022 թվականի նոյեմբերի 22-ին, ժամը 11.00-ին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 51, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ 2022 թվականի հոկտեմբերի 18-ի նիստի օրակարգի նախագծից հանում է 4-րդ հարցը՝ «Հայաստանի և Լեհաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյա և Հռոմի Սրբազան Քահայանապետ Նորին Սրբություն Հովհաննես Պողոս Բ-ի Հայաստան այցելության 20-ամյա հոբելյաններին նվիրված հուշարձանի (խաչքարի) տեղադրմանը համաձայնություն տալու մասին», 9-րդ հարցը՝ «Երևան համայնքի սեփականություն համարվող Հ.Մանանդյան փողոցի հ.3 շենքի հ.10 բնակարանն անհատույց օտարելու մասին» և 11-րդ հարցը՝ «Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N46-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի N301-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար Անի Խաչատրյանը հանդես եկավ արտահերթ ելույթով և առաջարկեց 2022 թվականի հոկտեմբերի 18-ի նիստի օրակարգի նախագծից հանել 12-րդ հարցը՝ ««Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխելու, կանոնադրության փոփոխությունը հաստատելու և «Լևոն Հովհաննիսյանի անվան սրտաբանության ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու մասին»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 52 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ - 7, դեմ՝ 33, ձեռնպահ՝ 10

Առաջարկությունը չընդունվեց ձայների մեծամասնությամբ:

Ելույթով հանդես եկավ Երևան քաղաքի ավագանու անդամ Իզաբելլա Աբգարյանը:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 18-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 9-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:
3. Հուշատախտակների տեղադրման մասին:
4. Կազմակերպված ծառայողական ավտոկայանտեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:
5. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
6. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:
7. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:
8. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N48-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

9. «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխելու, կանոնադրության փոփոխությունը հաստատելու և «Լևոն Հովհաննիսյանի անվան սրտաբանության ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու մասին:

10. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

11. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

12. Երևան քաղաքում թաղամաս անվանակոչելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 9-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 48 դեմ՝ 3, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

2. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան – Երևան քաղաքի ավագանու անդամ

Ելույթի վերաբեյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան քաղաքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝

1) Եկամուտները և ծախսային քաղաքանությունը շարադրող մասեր՝ համաձայն N1 հավելվածի

2) Վարչական և ֆոնդային մասերի եկամուտներն՝ ըստ ձևավորման աղբյուրների՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Վարչական և ֆոնդային մասերի տարեկան հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Վարչական և ֆոնդային մասերի հատկացումների կատարումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝ համաձայն N 4 հավելվածի.

5) Հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն N 5 հավելվածի.

6) Հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորումը ըստ աղբյուրների՝ համաձայն N 6 հավելվածի.

7) Վարչական և ֆոնդային մասերի տարեկան հատկացումները ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի և տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝ համաձայն N 7 հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 52 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 51, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

3. ԼՍԵՑԻՆ - Հուշատախտակների տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սերգեյ Գյոզալյան – Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Հուշատախտակների տեղադրման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լուսինե Գևորգյան–Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն.

1) ՀՀ ժողովրդական արտիստ, դերասան Կարեն Ջանիբեկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տերյան փողոց հ.19 հասցեում փակցնելու համար,

2) ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պատվավոր քաղաքացի Սերգեյ Համբարձումյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոց հ.31 հասցեում փակցնելու համար,

3) ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ Լևոն Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բաղրամյան պողոտայի հ.30 հասցեում փակցնելու համար,

4) Հայ մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտայի հ.17 հասցեում փակցնելու համար,

5) ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի Հրաբխագիտության լաբորատորիայի ավագ գիտաշխատող, երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածու Սերգեյ Հայկի Կարապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սայաթ-Նովայի պողոտա հ.25 հասցեում փակցնելու համար:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

4. ԼՍԵՑԻՆ - Կազմակերպված ծառայողական ավտոկայանտեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի պաշտոնակատար Հայկ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Դավիթ Խաժակյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

2. Էռնեստ Ավանեսով- Երևան քաղաքի ավագանու անդամ

3. Անի Խաչատրյան- Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի պաշտոնակատար Հ. Սարգսյանը:

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը և առաջարկեց աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի պաշտոնակատար Հայկ Սարգսյանին՝ ներկայացնել տեղեկատվություն մայրաքաղաքի տրանսպորտային ցանցում առկա ընդհանուր խնդիրների և դրանց լուծման համար նախատեսվող աշխատանքների ժամանակացույցի վերաբերյալ:

Վերոգրյալ հարցի վերաբերյալ ելույթներով հանդես եկան աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի պաշտոնակատար Հ.Սարգսյանը և «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Ս. Մանուկյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Կազմակերպված ծառայողական ավտոկայանտեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան – Երևան քաղաքի ավագանու անդամ

2. Թեհմինա Վարդանյան-Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

3.Լևոն Զաքարյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4.Անի Խաչատրյան - Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

5.Սերգեյ Գյոզալյան- Երևան քաղաքի ավագանու անդամ

Արտահերթ ելույթներով հանդես եկան Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը և ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար Մարկոս Հարությունյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությանը՝ 2022 թվականի ընթացքում հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով շարունակել ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 55 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 44, դեմ՝ 4, ձեռնպահ՝ 7

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

5. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի պաշտոնակատար Վահան Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Մարկոս Հարությունյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի պաշտոնակատար Վահան Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1.Լուսինե Գևորգյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Արմեն Ներսիսյան-Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Դրոյի փողոցի հ.13/1 հասցեում գտնվող 5495,3 քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 58 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 50, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 7

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

6. ԼՍԵՑԻՆ - Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի պաշտոնակատար Վահան Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սաթենիկ Մկրտչյան–Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի պաշտոնակատար Վահան Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1.Մարկոս Հարությունյան-Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

ՈՐՈՇՎԵՑ – 1.Համաձայնություն տալ՝ Արսեն Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող Գ.Աղաբաբյան փողոց հ.19/18 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 200.0քմ մակերեսով /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15042022-01-0273 վկայական/ հողամասը Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Գ.Աղաբաբյան փողոց հ.19/20 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 200.0քմ մակերեսով համարժեք հողամասի հետ փոխանակելուն:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 57 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 56, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

7. ԼՍԵՑԻՆ - Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի պաշտոնակատար Վահան Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Լևոն Զաքարյան–Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Մարկոս Հարությունյան-Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի պաշտոնակատար Վահան Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1.Սաթենիկ Մկրտչյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Համաձայնություն տալ՝ Գագիկ Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Գ.Աղաբաբյան փողոց հ.21/13 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 200.0քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 15.04.2022թ. հ.15042022-01-0171 վկայական, գաղտնաբառ՝ UHP5HB2X56JL/ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Գ.Աղաբաբյան փողոց հ.19/21 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 200.0քմ մակերեսով համարժեք հողամասի հետ փոխանակելուն:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 56 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 55, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

8. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N48-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Բաբաջանյանը:

Արտահերթ ելույթով հանդես եկան Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը և ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը:

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 14.00-ին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

1. Միքայել Մանրիկյան–Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2. Իզաբելլա Աբգարյան-Երևան քաղաքի ավագանու անդամ

3. Մարկոս Հարությունյան-Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

4. Լևոն Զաքարյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Արթուր Իսպիրյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Բաբաջանյանը, քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը և Արամ Դանիելյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տարոն Մարգարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արթուր Մայիլյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N48-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1.Իզաբելլա Աբգարյան-Երևան քաղաքի ավագանու անդամ

2. Լևոն Զաքարյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի «Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին» N48-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածում կատարել հետևյալ լրացումը.

1) 13-րդ կետում լրացնել նոր 3-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) Կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների մուտքերի աստիճաններին կից հատվածներում (աստիճանների բացվածքի եզրերին) անցորդների անվտանգությունը ապահովելու նպատակով պետք է տեղադրվեն (կառուցվեն) մայթի նիշից 60-90 սմ բարձրությամբ թեթև կոնստրուկցիաներով ճարտարապետական կառուցվածքներ: Կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների մուտքերը

սույն կարգի 5-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն պետք է ապահովված լինեն անհրաժեշտ լուսավորությամբ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների սեփականատերերը կամ տիրապետողները սույն որոշման 1-ին կետով նախատեսված պահանջներին համապատասխանող թեթև կոնստրուկցիաներով ճարտարապետական կառուցվածքների տեղադրումը (կառուցումը) պետք է ապահովեն մինչև 2023 թվականի հունիսի 1-ը: Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 48-Ն որոշման հավելվածի 13-րդ կետում լրացվող նոր 3-րդ ենթակետի առաջին նախադասությամբ սահմանված պահանջները չեն տարածվում այն կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների սեփականատերերի կամ տիրապետողների վրա, որոնք մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը արդեն իսկ տեղադրել (կառուցել) են անցորդների անվտանգությունը ապահովող միջոցներ (60-90 սմ բարձրությամբ):

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 52 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 48, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

9. ԼՍԵՑԻՆ - «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխելու, կանոնադրության փոփոխությունը հաստատելու և «Լևոն Հովհաննիսյանի անվան սրտաբանության ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետի տեղակալ Գևորգ Սիմոնյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

1. Անի Խաչատրյան–Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար
2. Սաթենիկ Մկրտչյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Միքայել Մանրիկյան-Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար
4. Լևոն Զաքարյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
5. Իզաբելլա Աբգարյան-Երևան քաղաքի ավագանու անդամ
6. Սերգեյ Գյոզալյան- Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Գևորգ Սիմոնյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ ««Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխելու, կանոնադրության

փոփոխությունը հաստատելու և «Լևոն Հովհաննիսյանի անվան սրտաբանության ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 7 անդամ.

1.Դավիթ Խաժակյան-Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

2. Լևոն Զաքարյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Սերգեյ Գյոզալյան- Երևան քաղաքի ավագանու անդամ

4. Սաթենիկ Մկրտչյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Թեհմինա Վարդանյան- Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

6. Անի Խաչատրյան–Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

7. Աշոտ Սարգսյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխել «Երևան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության:

2. Հաստատել «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

3. «Լևոն Հովհաննիսյանի անվան Սրտաբանության ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով սույն որոշման 1-ին կետով անվանափոխված «Երևան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությանը:

4. Սահմանել, որ «Լևոն Հովհաննիսյանի անվան Սրտաբանության ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը «Երևան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունն է, և վերջինիս են անցնում միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:

5. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության անվանափոխման և «Լևոն Հովհաննիսյանի անվան Սրտաբանության ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման գործընթացների իրականացումը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 49 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 43, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

10. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի մասին» N 497-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-5 հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 40 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

11. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի պաշտոնակատար Խորեն Գրիգորյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

1. Տիգրան Գալստյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Արմեն Ղալեչյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Պավել Սարգսյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Սաթենիկ Մկրտչյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Արման Բաբաջանյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի պաշտոնակատար Խորեն Գրիգորյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արթուր Մայիլյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Դավիթ Խաժակյան-Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

2. Թեհմինա Վարդանյան-Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

3. Լուսինե Գևորգյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Սաթենիկ Մկրտչյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) N2 հավելվածում «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Շինարարության և բարեկարգման վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	Շինարարության և բարեկարգման վարչություն				
1	Վարչության պետ	1	697,000		697,000
2	Վարչության պետի տեղակալ	2	561,000		1,122,000
3	գործավար	1	248,200		248,200
	Շինարարական ծրագրերի կառավարման բաժին				
4	Բաժնի պետ	1	408,000		408,000
5	Գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
6	Առաջատար մասնագետ	3	282,200		846,600
	Նախագծերի կառավարման և փաստաթղթաշրջանառության բաժին				
7	Բաժնի պետ	1	408,000		408,000
8	Գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
9	Առաջատար մասնագետ	2	282,200		564,400
10	Առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
	Ճանապարհների շահագործման և սպասարկման բաժին				
12	Բաժնի պետ	1	408,000		408,000
13	Գլխավոր մասնագետ	1	289,000		289,000
14	Առաջատար մասնագետ	1	282,200		282,200
15	Առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
	Ընդամենը՝	**20**			**6,973,400**

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ընդամենը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «638.5», «216,841,580» թվերը փոխարինե լիամապատասխանաբար «642.5», «218,364,780» թվերով:

3) «Ամբողջը» տողում «1980.5», «604,043,780» թվերը փոխարինել«1984.5», «605,566,980» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում

համապատասխան փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 43 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 43, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

12. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքում թաղամաս անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

1. Մարկոս Հարությունյան-Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար
2. Սաթենիկ Մկրտչյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Արման Անտոնյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Տիգրան Գալստյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
5. Նաիրա Խառատյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը և քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում թաղամաս անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Սաթենիկ Մկրտչյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Սերգեյ Գյոզալյան-Երևան քաղաքի ավագանու անդամ:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Տիչինայի փողոցի հ.320 հասցեի նոր կառուցվող թաղամասն անվանակոչել «Դեֆանս Հաուզինգ»:

ԳՐԱՆՅՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 41 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 31, դեմ՝ 5, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կազմեց՝
Ն. Ղուկասյան